ՆԱԽԱԳԻԾ - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«____» հուլիսի 2011թ. N ___-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխի կանոններով, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 36-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները և 2010 թվականի նոյեմբերի 26-ի N162-Ն որոշման 3-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*.

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի 140.0քմ մակերեսով տարածքը վարձակալության իրավունքով 7 /յոթ/ տարի ժամկետով տրամադրել քաղաքացի Արմեն Մուրադյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից Երևանի Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 8-րդ հարկի 140.0քմ (70քմ+70քմ) մակերեսով տարածքը վարձակալության իրավունքով տրամադրվել է քաղաքացիներ Նաիրա Ասլանյանին և Հերմինե Եփրեմյանին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 9-ի N604-Ն որոշմամբ Երևանի Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքը անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել է Երևան համայնքին, ինչի նկատմամբ կատարվել է համայնքի իրավունքի պետական գրանցում (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 17.01.2011թ. հ.2692212 վկայական):

Հաշվի առնելով, որ շենքի այն հատվածը, որում գտնվում էր վարձակալած տարածքը, անհրաժեշտ էր Երևան համայնքի կարիքների համար, այդտեղ նախատեսվում է տեղակայել քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումներ, ապա օգտագործողները համաձայնվել են տեղափոխվել շենքի 1-ին հարկ, ինչի պարագայում անհրաժեշտություն է առաջացել 1-ին հարկի տարածքի նկատմամբ ձևակերպել օգտագործման իրավունքը:

Նաիրա Ասլանյանը և Հերմինե Եփրեմյանը դիմումում հայտնել են, որ տեղափոխման ընթացքում տևական ժամանակ չեն կարողացել գործունեություն ծավալել և շահույթի նվազեցման արդյունքում ներգրավել են նոր մասնակցի և խնդրել են հատկացումը կատարել նոր մասնակցի անվամբ:

Հաշվի առնելով վերը նշվածը և այն, որ համայնքի սեփականություն հանդիսացող գույքը ուղղակի օգտագործման տրամադրելու համար անհրաժեշտ է Երևան քաղաքի ավագանու թույլատվությունը, ապա, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 36-րդ կետի 2-րդ ենթակետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի N162-Ն որոշման 3-րդ կետով, նախապատրաստվել է համապատասխան որոշման նախագիծ՝ Երևանի Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի 140.0 քմ մակերեսով տարածքը վարձակալության իրավունքով քաղաքացի Արմեն Մուրադյանին տրամադրելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից վարձակալության իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման ընդունման առնչությամբ առաջանում է «Երևանի Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից վարձակալության իրավունքով տարածք տրամադրելու մասին» Երևանի քաղաքապետի որոշում կայացնելու անհրաժեշտություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից վարձակալության իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ